

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԱԿԱՆ

«Փանօք ի բարձունս Աստուծոյ և յերկիր
խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:
Ղուկ. Բ. 14:

«Փանօք ի բարձունս Աստուծոյ», ահա, այս է հրեշտակ-
ների առաջին խօսքը, որոնք երկնքից երկիր իջան և
Քրիստոսի ծնունդը գովասանել սկսեցին: Նրանք իրենց
մաքուր, սուրբ, հրեշտակային մտքով բարձրանում են դէ-
պի վեր և Աստուծոյ մօտ իրենց օրհնութիւնն սկսում,
որ իւր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց և փրկութեան
ամբողջ գաղափարը Նրա մարդանալու մէջ ամփոփեց: Նրանք
նայում են ներկայիս և ապագայի վերայ, թէ ի՞նչ է
լինում աշխարհում. և ճանաչում են այս դէպքի մեծու-
թիւնը, որովհետեւ իրենց Թագաւորը, իրենց Տէրը այսօր
իբրեւ մի խեղճ աղքատ մարդու որդի ծնւում է, ուստի և
արժանի է մի միայն փառաբանուելու: Այդ պատճառով էլ
նրանք իրենց օրհնութիւնն սկսում են՝ «Փանօք ի բարձունս
Աստուծոյ» խօսքերով:

«Փանօք ի բարձունս Աստուծոյ»: Այո, երկնքում Աս-
տուծուն միշտ փառաբանում են այն հաղաւոր հրեշ-
տակներն ու սուրբ հոգիները, որոնք Նրա գահն են շրջա-
պատում. փառաբանում ու գովաբանում են անդադար
Նրան, որ էր, և պիտի գայ: «Սուրբ, սուրբ, սուրբ ես
Աստուած, Տէր Սաբաւովթ», այդպէս է հնչում ձայնը երկն-
քում: Նրանք փառաբանում են Նրան, երբ Նրա երեսն
ու աստուածային վեհութիւնն ու պայծառութիւնն են
տեսնում: Նրանք փառաբանում են Աստուծուն նաև իւր
գործերի համար, աշխարհի ստեղծագործութեան ու պահ-
պանութեան համար. ուստի և փառաբանում են Աստու-
ծուն առաւօտեան աստղն ու Նրա բոլոր որդիք: Նմա-
նապէս այստեղ, երկրիս վերայ պէտք է ամէն բան ծա-

ռայէ Արարչի փառաբանութեանը: Անբան արարածները փառաբանում են Աստուծուն, առանց Նրան ճանաչելու: Թռչունը, որ առաւօտեան դէմ ճիւղի վերայ նստած իւր երգն է երգում, փառաբանում է Նրան որ իրեն ստեղծել է: Խոտը, որ առանց մարդու օգնութեան աճում է, մարգերի ծաղիկը, որ մենք գարնանը և ամառը կոխելով անցնում, գնում ենք, առանց նրանց նկատելու, անձրևի կաթիլը, որ երկնքից ընկնում է, ամէն բան փառաբանում է Աստուծուն և Նրա պատուի համար քարոզում: Բոլոր արարածները թէ տեսանելի՝ երկրիս վերայ և թէ անտեսանելի՝ երկնքի վերայ, թէ ծովի մէջ, — ամբողջ աշխարհը լի է Աստուծոյ փառաբանութեամբ: Եւ այսպիսով բոլոր արարածները ի միասին կազմում են մի ներդաշնակութիւն, ու երգում՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ»:

Սակայն բոլոր արարածների մէջ մի միայն մարդկային ցեղն էր, որ այդ փառաբանութեանը մասնակից չէր: Մարդն էլ ստեղծուած է Աստուծուն փառաբանելու համար, սակայն նա իւր անհնազանդութեան պատճառով, կտրուել էր Աստուծուց: Աստուած նրան աւելի էր պատուել, իւր նմանողութեամբ ստեղծել, սակայն մարդ այդ աստուածակերպ պատկերը փչացրել, ինքն իրեն մեղքի մէջ էր ձգել: Ո՛հ, դու մահկանացու թշուառ, մեղքի տակ կորացած մարդկային ցեղ: Աստուած տեսաւ մարդու թշուառութիւնն ու կորստեան մատնուած վիճակը և այց արաւ նրան: Եւ ինչ որ յաւիտենական Սէրը վճռել էր, այն էլ դործ և ճշմարտութիւն դարձաւ այսօր Քրիստոսի ծըննդեամբ: Աստուծոյ Միածին Որդին ծնունդ Բէթղէհեմում, իբրև մի խեղճ մարդու զաւակ, մեր մահկանացու մարմնով և արեամբ, և այդ նա կատարեց, որ խեղճ մարդուն աւելի օգնել կարողանայ, նրա համար չարչարուել ու մեռնել, և դրանով նրան մեղքից ու մահից ազատել կարողանայ: Եւ ահա մեր Փրկիչը, մեր Ազատիչը, մեր Օգնականը, իբրև մի խեղճ երեսայ Բէթղէհեմի մսուրի մէջ է դրուած: Աշխարհի արարիչ Քրիստոսն է նա. ալելուեա: Եւ հրեշտակները տեսնելով յաւիտենական սիրոյ և ողորմա-

ծովթեան խորհուրդը Բրիտանոսի ծննդեամբ աշխարհին յայտնուած, իրենց զարմացման մէջ փառաբանում են Աստուծուն՝ «Փանք ի բարձունս Աստուծոյ»։

Մարդ զգում է այդ, մարդ լսում է այդ, նրանք կամենում են Աստուծուն փառաբանել, նրանց համար շատ բարձր է ու անհասանելի, որ Աստուած մարդ դարձաւ, և մի՞թէ մենք, չպէտք է ձայնակցենք նրանց, մենք, որ իրօք դեռ կաղսւմ ենք, մեր հաւատը դեռ թոյլ է, մենք կապուած ենք մեր մարմնի հետ ու մեղքերի մէջ կորած։ Սակայն, չնայած այս բոլորին, մենք իրաւունք ունենք փառաբանելու Աստուծուն այն մեծ բարութեան համար, որ Բրիտանոսի միջոցով ամբողջ մարդկութեանը՝ նաեւ մեզ ցոյց է տրուել։

«Փանք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»։ Հրեշտակները Աստուծուն փառաբանելուց յետոյ դառնում են այժմ դէպի երկիր։ Եւ ի՞նչ են տեսնում նրանք երկրիս վրայ։ — Զկայ խաղաղութիւն մարդկային ճանապարհի վրայ, չկայ խաղաղութիւն ոչ մէկի սրտում, և ոչ էլ սէր մարդկանց մէջ, այլ ներքուստ թշնամութիւն, ատելութիւն, կռիւ, կռասակցութիւն, աղաղակ, մարդասպանութիւն և պատերազմ։ Երկնքում, ուր այդ հոգիներն են լինում, — այնտեղ խաղաղութիւն, հանգստութիւն է տիրում, այնտեղ սիրոյ օրէնքն է թագաւորում, այնտեղ երջանկութիւն կայ։ Իսկ երբ երկնքից ներքեւ նայեցին, նրանք տեսան մարդկային մի ցեղ, որ ներքուստ չարագործութեամբ է լի։ Նրանք տեսան մարդասպանների, նախանձտանների և վրիժառուների։ Ո՛րքան տարբերութիւն կար երկնքի ու երկրի մէջ. և երկրի այդ խռովայոյց դրութիւնը հրեշտակների սրտին մեծ ցաւ պատճառեց։ Ուստի և աշխարհի Փրկչի ծննդեամբը ուրախութեան աղաղակ են բարձրացնում ու երգում՝ «Թող խաղաղութիւն լինի երկրիս վերայ, թող խաղաղութիւն տիրի մարդկանց սրտերին, թող խաղաղութիւնը թագաւորէ նաեւ մարդկանց միմեանց մէջ»։

Սակայն, արդեօք հրեշտակները չէ՞ն խաբուել իրենց

յուսոյ մէջ: Մի՞թէ երկրիս վերայ խաղաղութիւն կայ. արդեօք մարդկանց մէջ խաղաղութիւն է թագաւորում: Մի՞թէ այլ ևս կռիւ չկայ, պատերազմ չկայ սկսած այն օրից, երբ խաղաղութեան թագաւորը ծնուեց: Նայեցէք ձեր չորս կողմը և դուք ո՛չ մի տեղ խաղաղութիւն չէք գտնի: Քանի՜ քանիսները գնում են այս աշխարհից, իբրև մեղքի ստրուկներ, առանց խաղաղութիւն ունենալու իրենց սրտի մէջ, առանց մխիթարանքի, առանց յոյսի, չնայած աւետարանը նրանց քարոզուել է: Նայեցէք, հագիւ թէ խաղաղութեան իշխանը — Փրկիչը ծնուեց, և ահա շերովդէսը հրամայում է Բեթղէհեմում բոլոր մանուկներին կոտորել, արդեօք այս խաղաղութիւն է. արդեօք այն խաղաղութիւն էր որ Փրկչին մատնեցին և անմիտ աղաղակներով «ի խաչ հան զդա» գոռացին. արդեօք այն խաղաղութիւն էր, որ Փրկիչը դեռ ևս խաչի վերայ ծաղրի ու հայհոյանքի էր ենթարկւում. արդեօք այն խաղաղութիւն էր, որ նրանից յետոյ առաքեալներին հալածեցին և հաւատացեալ քրիստոնեաներին տանջեցին ու շատերին կոտորեցին. շատերը բերդերում իրենց կեանքը կնքեցին և շատերը գլխատուեցին: Արդեօք, Քրիստոսի ծննդից սկսած մինչև այսօր խաղաղութիւնն է տիրել աշխարհին: Արդեօք մեր տներում խաղաղութիւնն է թագաւորում, արդեօք ձեր մէջ խաղաղութիւն, միաբանութիւն ու համբերութիւնն է թագաւորում: Մենք բոլորս կասենք՝ ո՛չ, երկրիս վրայ խաղաղութիւն չկայ:

Սակայն ի՞նչպէս հրեշտակները կարող էին երգել, թող խաղաղութիւն լինի երկրի վերայ. արդեօք նրանք չէ՞ն խաբուել իրենց յոյսի մէջ: Ո՛չ, քրիստոնեայ ժողովուրդ. քանի՜ քանիսը աշխարհի ստեղծագործութիւնից սկսած սպասում էին Փրկչի գալստեանը, քանի՜ քանիսը թշուառութեանց ու մեղքի մէջ բաժանուել էին այս աշխարհից և սակայն իրենց յոյսը չէին կորցրել, որ պիտի դայ մէկը ու նրանց փրկէ իրենց այդ թշուառ դրութիւնից: Եւ ահա նրանց մէջ էր խաղաղութիւն թագաւորում. նրանց մէջ, որոնք զրկաբաց սպասում էին նորածին Փրկչին

իրենց մէջ ընդունելու: Ի՞նչ կայ առաւել լաւ, քան խղճի խաղաղութիւնը, երբ մարդ ոչնչից չէ վախենում, ոչ մահից, ոչ դատաստանից, այլ զիտէ, որ ինքը Աստուծոյ որդի է, Յիսուս Քրիստոսի միջոցով յաւիտենական կեանքի ժառանգն է:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ Թէպէտ և մարդս իւր մեղսագործութեամբ կտրուել էր Աստուծուց, սակայն Փրկչի ծննդեամբը այսօր կրկին հաշտութիւն է տեղի ունենում և Աստուած հաճոյք է զգում, մեզ՝ կորուսեալ մարդկանցս նորից տեսներով: Փրկիչը ծնուելով՝ սրբեց, մաքրեց մեր խիղճն ու հոգին և Աստուծուն հաճելի արաւ մեզ: Ո՛րպիսի մեծ շնորհի ենք մենք արժանացել: Աստուած մեզ այնքան սիրեց, որ իւր ողորմութեանը մեզ արժանի արաւ, նա մեզ այնքան սիրեց, որ մեզ համար, իբրև փրկանք, Իւր Միածին Որդուն ուղարկեց, որ իւր արեամբը պիտի մեզ զնէ, ազատէ հոգեպէս ու մարմնապէս և Աստուծոյ արքայութեան ժառանգ դարձնէ: Դրա համար թող փառք, պատիւ և երկրպագութիւն լինի երկնքումը Նրան յաւիտենանս յաւիտենից, ամէն:

Գեր. Թարգ. Առաւել վարդապետ

